Երրորդ հաղորդում

Ցորենի և գարու երկիր

Գրվածքների ընթերցում. Երկ Օր 8:8ա, Հվի 11:25, 12:24-25,
Ա Կրթ 15:20, Եփս 1:20

I. Երկ Օր 8:8ա-ի ցորենը մարմնավորված, խաչված ու թաղված Քրիստոսի նախատիպ է՝ Հվի 12:24.

Ա. Իր մարմնացման փուլում Իր լիակատար սպասավորության մեջ Քրիստոսն անսահման Աստծուն բերեց սահմանափակ մարդու մեջ՝ 1:1, 14.

1. Որպես սահմանափակ մարդ՝ Քրիստոսը մսեղիում սահմանափակված էր ժամանակի և տարածության մեջ՝ 7:6, 10.
   - ա. Տերը հավիտենական, անվերջ, անսահման Աստված է, բայց Նա այստեղ՝ երկրի վրա, ապրեց որպես մարդ՝ ժամանակի հարցում սահմանափակվելով՝ խ. 6:
   - բ. Թեև Տերն Ամենակարող Աստված է, բայց որպես հալածանքի տակ եղող մարդ՝ Իր գործունեության առնչությամբ սահմանափակված էր՝ խ. 10:
2. Որպես սահմանափակ մարդ՝ Քրիստոսը մսեղիում գիտելիքի առումով սահմանափակված էր՝ Մտթ 24:36, Ղկս 2:40, 52, հմմտ Հվի 7:15, Մրկ 6:1-3:
3. Որպես սահմանափակ մարդ՝ Քրիստոսը մսեղիում ուներ բնական, մարդկային կյանք ու կախյալ գոյություն՝ Հվի 10:11, 15, 17, 6:57ա, Մտթ 14:19:

Բ. Քրիստոսի մարդկայնությունը Նրա մարմնացման միջոցով դարձավ մի պատյան, որը թաքցնում էր Նրա աստվածայնությունը և, այդպիսով, թաքցնում Նրա փառքը՝ Հվի 1:14, 12:23-24, Ղկս 12:50.

1. Քանի որ Տեր Հիսուսի մարդկայնության պատյանը ծածկում էր Նրա աստվածայնության փառքը, Նա տվայտում էր և կաշկանդված էր՝ փափագելով Իր մահվան մկրտությամբ մկրտվել, որպեսզի Իր աստվածայնության փառքն ազատագրի՝ խ. 50:
2. Տերը պետք է ֆիզիկական մահվան ենթարկվեր, որպեսզի Իր անսահման և անվերջ աստվածային բնությունն Իր աստվածային կյանքով ազատագրվեր Իր մսեղիից:
3. Տեր Հիսուսն ընկավ հողի մեջ ու մեռավ, և այդ մահը Նրան ազատագրեց Իր մարդկային պատյանից՝ Հվի 12:24.
   - ա. Նա ընկավ հողի մեջ ու մեռավ, որպեսզի Իր աստվածային տարրը, Իր աստվածային կյանքն ազատագրվի Իր մարդկայնության պատյանի ներսից:
   - բ. Տեր Հիսուսը՝ որպես ցորենի հատիկը, որ ընկնում է հողի մեջ, մահվան միջոցով կորցրեց Իր շնչավոր կյանքը, որպեսզի ազատագրի Իր աստվածային կյանքը:

Գ. Այն իրավիճակների մեջտեղում, որոնք սահմանափակում են մեզ և ճնշում, մենք կարող ենք փորձառաբար ապրել Քրիստոսին՝ որպես ցորենի հատիկի՝ խ. 24.

1. Ամեն անգամ, երբ Տիրոջ գերիշխանությամբ մեզ դնում են այնպիսի իրավիճակում, որում սահմանափակված ենք, որում ճնշված ենք, մենք կարող ենք փորձառաբար ապրել Տիրոջը՝ որպես ցորենի հատիկի՝ Հռմ 8:28:
2. Երբ մեր սահմանափակող ու կաշկանդող հանգամանքներում շփվենք Տիրոջ հետ, կհասկանանք, որ Նա անսահմանափակ Աստված է, ով դարձավ սահմանափակ մարդ, և որ Նրա մեջ կա ամեն տեսակ սահմանափակում կրելու զորություն՝ Փլպ 4:13:
3. Քրիստոսը՝ մեր կյանքը, մեր մեջ է որպես ցորենի հատիկ, որպեսզի մենք մարմնացած Անձի, սահմանափակված Անձի կյանքն ապրենք՝ Կող 1:27, 3:4:
4. Եթե շփվենք Տիրոջ հետ, Նրան փորձառաբար կապրենք որպես ցորենի հատիկի և Նրա մեջ գոհ կլինենք մեր իրավիճակից՝ Փլպ 4:11-12:
5. Որպես ցորեն՝ Քրիստոսը մեր կյանքն է, որպեսզի մեզ պատրաստակամ դարձնի սահմանափակվելու, պատրաստակամ՝ մեռնելու, պատրաստակամ՝ թաղվելու, պատրաստակամ՝ ոչինչ լինելու. սա Քրիստոսի՝ որպես ցորենի փորձառությունն է՝ Հվի 12:24-25:

II. Ցորենը խորհրդապատկերում է մարմնացած, խաչված ու թաղված Քրիստոսին, իսկ գարին խորհրդապատկերում է հարուցանված Քրիստոսին՝ 8:8ա.

Ա. Բարի երկրում գարին ավելի շուտ է հասունանում, քան մյուս բոլոր հացահատիկները, հետևաբար այն երախայրին է՝ Ա Կրթ 15:20.

1. Քանի որ գարին շուտ է հասունանում, այն բերքի երախայրին է՝ հարուցանված և անսահման Քրիստոսի մի նախատիպ՝ խ. 20:
2. Մենք ուրախանում ենք՝ իմանալով, որ Քրիստոսը գարին է՝ մեր ներսում եղող հարուցանված Քրիստոսը, և որ Նա ի վիճակի է դիմակայելու ամեն իրավիճակի:
3. Քրիստոսը՝ որպես հարության երախայրին, մեռելներից Անդրանիկն է, որպեսզի լինի Մարմնի Գլուխը (Կող 1:18, Եփս 1:20-23), քանի որ Նա՝ Մարմնի Գլուխը, հարություն է առել, մենք՝ Մարմինը, նույնպես հարություն ենք առնելու:
4. Որպես երախայրին՝ Քրիստոսը դարձավ կյանքի հացը, ուստի գարեհացերը խորհրդապատկերում են հարության մեջ եղող Քրիստոսին՝ որպես մեզ համար կերակրի՝ Հվի 6:48.
   ա. Հինգ թիվը խորհրդապատկերում է պատասխանատվություն. սա ցույց է տալիս, որ հարուցանված Քրիստոսն ի վիճակի է պատասխանատվություն կրելու:

բ. Երբ սնվում ենք Քրիստոսով՝ որպես գարեհացերով, դառնում ենք գարեհաց, որպեսզի այն Քրիստոսով, որին փորձառաբար ապրել ենք, կերակրենք ուրիշներին:

5. Տեր Հիսուսը կարողացավ հինգ գարեհացով հինգ հազար մարդու կերակրել, ընդ որում՝ տասներկու զամբյուղ կտորտանք ավելացավ. սա հարությունն է՝ Մտթ 14:14-21, Հվհ 6:9, 13:

Բ. Գարիով խորհրդապատկերված, հարուցանված Քրիստոսն անսահման է՝ Փլպ 4:13.

1. Ցորենը մատնանշում է Քրիստոսի մարմնացումը, մահն ու թաղումը, և, սրան հաջորդելով, գարին մատնանշում է Նրա հարությունը, հարուցանված Քրիստոսին՝ Հվհ 11:25, Եփս 1:20:
2. Մի կողմից՝ մենք կարող ենք փորձառաբար ապրել սահմանափակված Հիսուսին, ով խորհրդապատկերված է ցորենով. մյուս կողմից՝ կարող ենք փորձառաբար ապրել անսահման Քրիստոսին, ով խորհրդապատկերված է գարիով՝ Հվհ 12:24, 6:9, 13.
   ա. Հիսուսն Իր մարմնացմամբ ծայրաստիճան սահմանափակված էր, բայց Իր հարության մեջ անսահման է՝ Ղկս 12:49-50, 24:5-6, 26, 34, 46:
   բ. Ցորենը մահվան հովիտն է, իսկ գարին հարության լեռն է:
3. Որպեսզի փորձառաբար ապրենք ցորենը՝ սահմանափակված Հիսուսին, անհրաժեշտ է կիրառել գարին՝ անսահման Քրիստոսին. մենք հարուցանված Քրիստոսի զորությամբ հետևում ենք սահմանափակված Հիսուսին՝ Եբր 13:12-13:
4. Մենք ամեն բան անելու կարող ենք Նրա մեջ, ով մեզ զորացնում է, քանի որ Նա հարուցանված և անսահման Քրիստոսն է՝ Փլպ 4:13:
5. Ամեն անգամ, երբ փորձառաբար ապրում ենք Քրիստոսին՝ որպես ցորենի, վստահաբար գիտենք, որ դրան հաջորդելու է Քրիստոսի՝ որպես գարու փորձառությունը՝ Երկ Օր 8:8ա:
6. Իրականում Քրիստոսին՝ որպես ցորենի հատիկին, սահմանափակված Հիսուսին, փորձառաբար ապրելու համար պետք է Նրան կիրառել որպես գարու՝ հարուցանված Քրիստոսի՝ Հվհ 12:24-25:
7. Մենք չենք կարող ինքներս բավարարել մեր կարիքները, բայց մեր ներսում գարեհացը՝ հարուցանված անսահման Քրիստոսը, բավարարում է ամեն կարիք և նույնիսկ հավելուրդ է առաջացնում՝ 11:25:
8. Հարություն առած Քրիստոսը գարեհացն է. ոչինչ չի կարող խանգարել կամ սահմանափակել Նրան:
9. Եթե հիշենք, որ Քրիստոսը մեր մեջ գարի է, երբ գանք հավաքույթի, կարող ենք կիրառել Նրան՝ որպես գարու, որպեսզի կերակրենք ուրիշներին մեր աղոթքով կամ մեր վկայությամբ:

© 2023 Living Stream Ministry